

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի.

1). 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն եւ առնվազն երկու տարվա համապատասխան մասնագիտական աշխատանքային ստաժ եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: »

2). 16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին, 1.2- րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.7-րդ, ~~եւ~~ 1.8-րդ, 6.1-ին և 6.2-րդ մասերով.

«1.1. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթի արդյունքում:

1.2. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

1.3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համարելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ ~~պետք է~~ մրցույթային հանձնաժողովին են ներկայացնում ~~եւ~~ իրենց կողմից մշակված համապատասխան պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ:

1.4. Պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը եւ չափորոշիչները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

1.5. Մինչեւ գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը եւ անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակում է մինչեւ վեց ամիս ժամկետով:

1.6. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով: ~~մեկ անգամ՝ 3 ամիս ժամկետով:~~

1.7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել տնօրենի թափուր տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները բավարարող անձը:

1.8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում ~~թ~~ որոշակի ժամկետով կատարում է նշանակում զբաղեցվում է գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝

1) հղիության եւ ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) ~~Պետական կազմակերպության գործադիր մարմնի կողմից~~ իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում:

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:»:

«6.1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»

«6.2. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»

3) 16-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետից հանել « և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ» բառերը:

4) 16-րդ հոդվածի 3-րդ մասի`

1. «է» կետում «հինգ» բառը փոխարինել «մեկ» բառով:

2. «ժգ» կետում «օրենքի» բառը փոխարինել «օրենսդրության» բառով, իսկ «կրկնակի» բառը հանել:

Հոդված 2. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկ⁴ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը: